

Նոր խմբագրությամբ գրանցված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Զավադյան

«09» նոյեմբեր 2011թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ
ծառայությունների մատուցման
կանոններ
(Նոր խմբագրություն)

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ և հասկացություններ

1. Սույն կանոնները սահմանում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 176. հոդվածի 2-րդ մասով նախատեսված լրացուցիչ ծառայությունները, դրանց բնույթը, մատուցման կարգը և պայմանները:
2. Սույն կանոններում կիրառվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.
 - 2.1. «**թողարկող**». իրավաբանական անձ, որը Դեպոզիտարիայի հետ կնքել է անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագիր:
 - 2.2. «**էսքրոու**». Դեպոզիտարիայի կողմից սույն կանոնների համաձայն մատուցվող ծառայություն, երբ սույն կանոններով սահմանված կարգով Դեպոզիտարիան ապահովում է, որ գրանցված սեփականատիրոջ և այլ անձի կամ անձանց միջև կնքված համաձայնությամբ կամ պայմանագրով, ինչպես նաև նրանց և Դեպոզիտարիայի միջև վերոնշյալ պայմանագրի հիման վրա կնքված եռակողմ կամ բազմակողմ պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված Պայմանագրի առարկա՝ Դեպոզիտարիայում գրանցված արժեթղթերի օգտագործման և տիրապետման իրավունքները փոխանցվեն Պայմանագրով սահմանված որևէ կողմին (անձին) մինչև Պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի լրանալու և/կամ իրադարձության տեղի ունենալու պահը:
 - 2.3. «**փաստաթղթերի, հանձնարարականների և/կամ տեղեկությունների ներկայացում**». սույն կանոններով սահմանված փաստաթղթերի, հանձնարարականների և/կամ տեղեկությունների (եթե սույն կանոններով դրանց էլեկտրոնային եղանակով ներկայացնելու առանձնահատկություններ չեն սահմանվել, ապա դրանց ստորագրված, կնքված և տեսաձրած (սքան) տարբերակների) էլեկտրոնային եղանակով փոխանցում Դեպոզիտարիայի իրավասու էլեկտրոնային հասցեին կամ թղթային եղանակով փաստաթղթերի, հանձնարարականների և/կամ տեղեկությունների փոխանցում Դեպոզիտարիա: Այն դեպքում, երբ Դեպոզիտարիա է ներկայացվում փաստաթղթի պատճենը, ապա Դեպոզիտարիայի աշխատակցի պահանջով թողարկող/գրանցված սեփականատերը (անվանատերը) պարտավոր է ներկայացնել նաև փաստաթղթի բնօրինակը, որը Դեպոզիտարիայի աշխատակիցը համեմատում է պատճենի հետ և վերադարձնում:

- 2.4. «պատշաճ վավերացում».** բնօրինակ փաստաթղթի պատճենի վրա թողարկողի կնիքով հաստատումը և «իսկականի հետ ճիշտ է» մակագրությունը կամ նոտարի կողմից վավերացված պատճենը:
3. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Դեպոզիտարիայի այլ կանոններով սահմանված նշանակությունները:
4. Սույն կանոններով սահմանված հանձնարարականների և դրան կից կամ այլ փաստաթղթերի, տեղեկությունների ընդունման, մշակման, կատարման կամ մերժման ներքին ընթացակարգի վրա չեն տարածվում Դեպոզիտարիայի «Կենտրոնացված ռեեստրի վարման և պահառության կանոնակարգ»-ի 10.2. և 10.3. կետերով սահմանված գործառնությունների իրականացումը: Սույն կանոններով սահմանված հանձնարարականների և դրան կից կամ այլ փաստաթղթերի, տեղեկությունների ընդունման, մշակման, կատարման կամ մերժման ներքին ընթացակարգը սահմանվում է Դեպոզիտարիայի գործադիր մարմնի համապատասխան որոշման/հրամանի հիման վրա:

Գլուխ 2. Լրացուցիչ ծառայությունները

Հոդված 2. Ծառայությունների անվանումը, բնույթը և առանձնահատկությունները

1. Դեպոզիտարիայի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայություններն են.
- 1.1. Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում,
 - 1.2. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար:
2. Սույն հոդվածի 1.1. կետով սահմանված ծառայությունը ներառում է՝
- 2.1. Արժեթղթի տեղաբաշխման, ձեռքբերման, հետզնման կամ այլ կերպ արժեթղթերի մեկ հաշվից մյուսին փոխանցման գործառնությունների (այդ թվում էսքրոու) սահմանափակման, նախապատվության իրավունքի պահպանման նկատմամբ հսկողության իրականացում,
 - 2.2. օրենքով, պայմանագրով կամ թողարկողի կանոնադրությամբ նախատեսված արժեթղթերով գործառնությունների (բացառությամբ սույն հոդվածի 2.1. կետով սահմանված գործառնությունների) այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում:
3. Սույն հոդվածի 1.1. կետով սահմանված ծառայությունը չի տարածվում՝

- 3.1. թողարկողի այն արժեթղթերի վրա, որոնք հաշվառվում են Դեպոզիտարիայում բացված անվանատիրոջ (բացառությամբ օտարերկրյա անվանատիրոջ) անձնական հաշվում: Օտարերկրյա անվանատիրոջ հարաբերությունների և փաստաթղթաշրջանառության վրա տարածվում են նաև Դեպոզիտարիայի «Օտարերկրյա անվանատիրոջ սպասարկման կանոններ»-ով սահմանված դրույթները:
 - 3.2. բաժնետոմսերի քվեարկության իրավունքի սահմանափակման վրա.
4. Սույն հոդվածի 1.2. կետով սահմանված ծառայությունը չի տարածվում թողարկողի այն բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման վրա, որոնք հաշվառվում են Դեպոզիտարիայում բացված անվանատիրոջ (բացառությամբ օտարերկրյա անվանատիրոջ) անձնական հաշվում:

Գլուխ 3. Լրացուցիչ ծառայությունների մատուցման կարգը

Հոդված 3. Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում

1. Սույն հոդվածով նախատեսված ծառայությունը (այսուհետ սույն հոդվածում՝ Ծառայություն) մատուցվում է ինչպես թողարկողին, այնպես էլ նրա կողմից թողարկած արժեթղթերի գրանցված սեփականատիրոջը:
2. Ծառայությունից օգտվելու համար թողարկողը Դեպոզիտարիա է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
 - 2.1. Համապատասխան գրավոր դիմում ուղղված Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարին՝ նշելով սույն ծառայությունից օգտվելու ցանկության մասին, շարադրելով նաև սույն կանոնների 3-րդ հոդվածով սահմանված փաստերի վերաբերյալ տեղեկացված լինելու մասին: Սույն կետով սահմանված դիմումում նշված լինելու դեպքում տվյալ թողարկողի արժեթղթերի գրանցված սեփականատիրոջը կարող է մատուցվել նաև արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայություն:
 - 2.2. Արժեթղթով հավաստված իրավունքի սահմանափակման, նախապատվության իրավունքի պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներ պարունակող փաստաթղթերի (այդ թվում կանոնադրություն, համաձայնագիր, պայմանագիր, ժողովի որոշում և այլն) բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքի: Այն դեպքում, երբ նախապատվության իրավունքի կիրառման համար թողարկողի կողմից առանձին կարգ չի սահմանվում, ապա թողարկողի դիմումի համաձայն նախապատվության իրավունքի կիրառման և պահպանման հսկողության նկատմամբ Դեպոզիտարիայի կողմից կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ

սահմանված դրույթները,

- 2.3. Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված համապատասխան վճարը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան երաշխիքներ:
3. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայության մատուցման դեպքում գրավառուն, ի լրումն թողարկողի կողմից Դեպոզիտարիա ներկայացված սույն հոդվածի 2.1. և 2.3. կետերով սահմանված փաստաթղթերի, ներկայացնում է հետևյալ փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը՝
 - 3.1. արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման պայման նախատեսող պայմանագիր/համաձայնագիր,
 - 3.2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավատուին կատարված ծանուցումը և ապացույց գրավատուի կողմից դրա ստացման վերաբերյալ, որոնք կարող են Դեպոզիտարիա ներկայացվել ինչպես Դեպոզիտարիա դիմելիս, այնպես էլ գրավի առարկայի իրացման ժամանակ,
 - 3.3. Սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված արժեթղթերի փոխանցման հանձնարարական և արժեթղթերի փոխանցման գրանցման դիմաց Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված վճարի վճարումը հավաստող փաստաթուղթ կամ համապատասխան երաշխիքներ (արժեթղթերի գրավի իրացման ժամանակ),
 - 3.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում):
 4. Դեպոզիտարիա ներկայացված սույն հոդվածի 2.1, 2.2., և 2.3. կետերով սահմանված փաստաթղթերը ուսումնասիրվում են ներկայացման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում:
 5. Ուսումնասիրությունից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Դեպոզիտարիան կազմում է ամփոփաթերթ տեղեկանք (այսուհետ սույն հոդվածում՝ Ամփոփաթերթ) տվյալ արժեթղթով հավաստված իրավունքի սահմանափակման/նախապատվության իրավունքի պահպանման՝ Դեպոզիտարիայի կողմից կիրառվելիք հսկողության մեխանիզմների վերաբերյալ, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և սույն հոդվածի 2.2. կետով սահմանված փաստաթղթերի համապատասխան դրույթները: Ամփոփաթերթը ստորագրվում է (բացառությամբ էսքրոու ծառայության մատուցման դեպքում) թողարկողի և Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից սահմանված լիազորված ներկայացուցչի կողմից: Էսքրոու ծառայության մատուցման դեպքում կնքվում է Պայմանագիր, որը առնվազն ներառում է Ամփոփաթերթի դրույթները:
 6. Ամփոփաթերթի և/կամ Պայմանագրի հիման վրա Ամփոփաթերթի կազմման, իսկ Պայմանագրի դեպքում կնքման հաջորդ աշխատանքային օրը Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը տալիս է համապատասխան հրաման (այսուհետ

սույն հոդվածում՝ Հրաման) Ամփոփաթերթի և/կամ Պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ: Հրամանի տրման օրվան հաջորդող աշխատանքային օրը համարվում է Ծառայության մատուցման առաջին աշխատանքային օր, բացառությամբ, եթե Ամփոփաթերթով կամ Պայմանագրով Ծառայության մատուցումը սկսելու համար այլ ժամկետ սահմանված չէ:

7. Յուրաքանչյուր անգամ, երբ Դեպոզիտարիա են դիմում գրանցելու այնպիսի գործառնություն, որի նկատմամբ Դեպոզիտարիան ունի հսկողության իրականացման պարտավորություն և առկա են տվյալ գործառնության գրանցման մերժման հիմքեր Ամփոփաթերթի և Հրամանի հիման վրա, ապա վերջինս մերժում է տվյալ գործառնության գրացումը և գրավոր ներկայացնում գործառնության մերժման պատճառները կամ պահանջում լրացուցիչ փաստաթղթեր, որի մասին դրույթներ սահմանված են Ամփոփաթերթում, որոնք անհրաժեշտ են սահմանված սահմանափակման/նախապատվության իրավունքի պահպանման նկատմամբ լիարժեք հսկողություն իրականացնելու համար:
8. Լրացուցիչ փաստաթղթերը ընդունվում և ուսումնասիրվում են համապատասխան դիմումի հետ միասին Դեպոզիտարիայի գործող կանոններով սահմանված կարգով:
9. Դեպոզիտարիա ներկայացված սույն հոդվածի 2.2. կետով սահմանված փաստաթղթով նախատեսված դեպքերում, Ամփոփաթերթի հիման վրա կնքված Պայմանագրով և սույն հոդվածի դրույթներին համապատասխան Դեպոզիտարիան ապահովում է նաև էսքրոու ծառայության մատուցում:
10. Էսքրոու ծառայության մատուցման դեպքում Պայմանագրով սահմանված կարգով Դեպոզիտարիան Պայմանագրի առարկա արժեթղթերը փոխանցում է դրանում նշված համապատասխան անձի՝ Դեպոզիտարիայում բացված արժեթղթերի անձնական հաշվին և արգելադրում դրանք՝ մինչև Պայմանագրով սահմանված ժամկետը և/կամ իրադարձության տեղի ունենալու պահը: Պայմանագրով սահմանված համապատասխան դեպքերում և կարգով Դեպոզիտարիան իրավունք ունի տվյալ արժեթղթերի արգելադրումը դադարեցնել կամ տվյալ արժեթղթերի արգելադրումը դադարեցնել և դրանք փոխանցել Պայմանագրով սահմանված այլ անձի՝ Դեպոզիտարիայում բացված արժեթղթերի անձնական հաշվին:
11. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայության մատուցման համար սույն հոդվածի 3.1., 3.2., 3.3. և 3.4. կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացնում է գրավառուն:
12. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացումը կատարվում է գրավառուի կողմից սույն հոդվածի 3.2., 3.3. և 3.4. կետերում նշված փաստաթղթերը և հանձնարարական Դեպոզիտարիա ներկայացնելու դեպքում, գրավատուին սույն հոդվածի 3.2. կետում նշված փաստաթղթերի ներկայացման՝ ՀՀ քաղաքացիական օրենքով սահմանված ժամկետի պահպանման դեպքում: Եթե սույն կետում նշված

ժամկետը չի պահպանվել, Դեպոզիտարիան մերժում է գրավի արտադատական կարգով իրացման՝ արժեթղթերի փոխանցման գործառնության գրանցումը:

13. Գրավառուի կողմից Դեպոզիտարիա ներկայացված սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված արժեթղթերի փոխանցման հանձնարարականը (Ձև ՓՀ ԳԱԻ) հիմք է հանդիսանում Դեպոզիտարիայում արժեթղթերի արգելադրման դադարեցման և փոխանցման գործառնության գրանցման համար: Դեպոզիտարիան իրականացնում է արժեթղթերի փոխանցման գործառնության գրանցում Դեպոզիտարիայի գործող կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: Գործառնության գրանցման ժամանակ արժեթղթերը ստացողին անվճար տրամադրվում է ռեեստրից քաղվածք կամ գործառնությունների մասին տեղեկանք:
14. Ծառայությունների մատուցման դեպքում որևէ գործառնության գրանցման մերժման ժամանակ տրամադրվում է գրավոր մերժման տեղեկանք, այն մեկնաբանությամբ, որ Դեպոզիտարիան կիրառում է սույն հոդվածով նախատեսված դրույթները: Սույն կետում նշված տեղեկանքը կազմվում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:

Հոդված 4. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար

1. Սույն հոդվածով նախատեսված ծառայությունը (այսուհետ սույն հոդվածում՝ Ծառայություն) մատուցվում է արժեթղթերի գրանցված սեփականատիրոջը, օտարերկրյա անվանատիրոջը:
2. Ծառայությունից օգտվելու համար արժեթղթերի գրանցված սեփականատերը կամ օտարերկրյա անվանատերը Դեպոզիտարիա է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
 - 2.1. գրավադրման հիմքով արգելադրվող բոլոր բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի սահմանափակման համար սույն կանոնների Հավելված 2-ով սահմանված հանձնարարագիր,
 - 2.2. այն դեպքում, երբ բաժնետոմսերը Դեպոզիտարիայում գրավադրման հիմքով արգելադրվել են ավելի վաղ, ապա Հավելված 3-ով սահմանված ձևին համապատասխան հանձնարարագիր, սույն հոդվածի 2.1. կետով սահմանված հանձնարարագրի փոխարեն:
 - 2.3. Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված համապատասխան վճարը հավաստող փաստաթուղթը:
3. Օտարերկրյա անվանատերը Ծառայությունից օգտվելու համար ներկայացնում է Դեպոզիտարիայի «Օտարերկրյա անվանատիրոջ սպասարկման մասին» կանոններով սահմանված համապատասխան հանձնարարագիր/հանձնարարական:

4. Սույն հոդվածի 2.1. կամ 2.2. կետով սահմանված հանձնարարագրի հիման վրա և այն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Դեպոզիտարիայի համակարգչային ծրագրային համակարգում կատարում է համապատասխան գրառում տվյալ գրանցված սեփականատիրոջ անձնական հաշվում:
5. Սույն հոդվածի 4. կետով սահմանված գրառումը կատարելու օրվա դրությամբ տվյալ գրանցված սեփականատիրոջը անվճար տրամադրվում է ռեեստրից քաղվածք կամ գործառնությունների մասին տեղեկանք:
6. Դեպոզիտարիան պարտավորվում է ապահովել է, որ իր կողմից թողարկողին, ինչպես նաև գրանցված սեփականատիրոջը տրամադրվող համապատասխան տեղեկություններում հստակ կնշվեն տեղեկություններ քվեարկելու իրավունքի սահմանափակմամբ արժեթղթերի մասին:
7. Բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակումը համարվում է դադարեցված Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով արժեթղթերի գրավադրման հիմքով արգելադրման դադարեցման հետ մեկտեղ: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է գրավադրման հիմքով արգելադրված բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի սահմանափակումը դադարեցնել ավելի վաղ, քան դրա արգելադրումը, ապա տվյալ բաժնետոմսերի գրավառուն Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով Դեպոզիտարիա է ներկայացնում համապատասխան համաձայնություն գրավադրված բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման վերաբերյալ:

Գլուխ 4. Անցումային դրույթներ

Հոդված 5. Սույն կանոնների ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոններով:
2. Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները հանդիսանում են դրա անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Հաստատված է՝

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

Դիտորդ խորհրդի 14.10.2011թ.

որոշմամբ

Վ. Ստեփանյան

ք. Երևան

Հավելված 1.

Արժեթղթերի փոխանցման հանձնարարական (գրավի արտադատական կարգով իրացման դեպքում)										Ձև ՓՀ ԳԱԻ			
Գրավատուն		Անձնական հաշվի համարը											
Ազգանուն, անուն (անվանում)													
Անձը հաստատող փաստաթղթի (պետական գրանցման վկայականի)		Տեսակ		Սերիա		Համար							
Կարգավիճակ		<input type="checkbox"/> Սեփականատեր					<input type="checkbox"/> Համասեփականատեր						
Արժեթղթերը ստացող անձը		Անձնական հաշվի համարը (առկայության դեպքում)											
Ազգանուն, անուն (անվանում)													
Անձը հաստատող փաստաթղթի (պետական գրանցման վկայականի)		Տեսակ		Սերիա		Համար							
Կարգավիճակ		<input type="checkbox"/> Սեփականատեր			<input type="checkbox"/> Անվանատեր			<input type="checkbox"/> Համասեփականատեր					
Արժեթղթերը ստացող անվանատիրոջ հաճախորդի արժեթղթերի հաշվի համարը (լրացնել այն դեպքում, երբ արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջը)													
Ազգանուն, անուն (անվանում)													

Փոխանցվող արժեթղթերը												
Թողարկողի անվանումը												
Արժեթղթերի		Դասը										
		Տարբերակիչ ծածկագիրը (ISIN) (առկայության դեպքում)										
Փոխանցվող արժեթղթերի քանակը		թվերով										
		տառերով										
Հավաստագրեր <input type="checkbox"/> չկան <input type="checkbox"/> կան (առկայության դեպքում նշել վավերապայմանները)		սերիա		համար		քանակ						
		սերիա		համար		քանակ						
Արժեթղթերի փոխանցման հիմքը <input type="checkbox"/> (նշել) _____												
Արժեթղթերի փոխանցման գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները (առկայության դեպքում)												
Արժեթղթի միավորի գինը (առկայության դեպքում) նշել թվերով և տառերով				Գործարքի ծավալը (առկայության դեպքում) նշել թվերով և տառերով								

Հանձնարարականը ստորագրված է՝ <input type="checkbox"/> Գրավատուի կողմից <input type="checkbox"/> Գրավատուի լիազորված ներկայացուցչի կողմից		<u>Ստորագրության տեղը</u>		Կ.Տ. (իրավաբանական անձանց համար)	
--	--	---------------------------	--	--	--

Գրավառուի ազգանունը և անունը (անվանումը)		Գրավառուի լիազորված ներկայացուցչի անունը և ազգանունը (լրացնել լիազորված ներկայացուցչի առկայության դեպքում)	
Ստորագրությունը վավերացված է՝ (լրացնել այն դեպքում, երբ հանձնարարականը ստորագրվել է Դեպոզիտարիայի ներկայացուցչի բացակայությամբ): <input type="checkbox"/> արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի կողմից <input type="checkbox"/> նոտարի կողմից			
Անվանում			Կ.Տ.
Ազգանուն, անուն			
Պաշտոն			
Ստորագրություն			
Ամսաթիվ (օր/ամիս/տարի)			

Դեպոզիտարիայի նշումներ	Մուտքի N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____	<input type="checkbox"/> Մերժված է <hr/> <hr/> <hr/>
	Փաթեթի N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____	
	ԳԳՏ N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____	
	Այլ նշումներ _____			
Կցվում է _____ էջ				

Հավելված 2.

Բաժնետոմսերի քվեարկելու իրավունքի սահմանափակմամբ արժեթղթերի արգելադրման հանձնարարագիր								ԱՀ 303.1 ԲՔԻՍ		
Արգելադրան հանձնարարագիրը տվող անձի		Անձնական հաշվի համարը								
Ազգանուն, անուն (անվանում)										
Անձը հաստատող փաստաթուղթ /պետական գրանցման վկայական		Սերիա (առկայության դեպքում)		Համար						
Ո՞ր կողմից է տրված/գրանցող մարմնի անվանումը				Տրման/գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)						
Արգելադրվող արժեթղթերը										
Թողարկողի անվանումը										
Արժեթղթերի		Դասը								
		Տարբերակիչ ծածկագիրը (ISIN) (առկայության դեպքում)								
Արգելադրվող արժեթղթերի քանակը		թվերով								
		տառերով								
Հավաստագրեր <input type="checkbox"/> չկան <input type="checkbox"/> կան (Կցեք և նշեք վավերապայմանները)		սերիա		համար		քանակ				
		սերիա		համար		քանակ				
Արգելադրման հիմքը և արգելադրման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները										
Նշում քվեարկության իրավունքի սահմանափակման մասին		<input type="checkbox"/> խնդրում եմ սահմանափակել գրավադրվող թվով(բառերով) հատ արժեթղթերի քվեարկելու իրավունքը								
Գրավառու										
Ազգանուն, անուն (անվանում)										
Անձը հաստատող փաստաթուղթ/գրանցման վկայական		Սերիա (առկայության դեպքում)		Համար						
Ո՞ր կողմից է տրված/ գրանցող մարմնի անվանումը				Տրման/գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)						
Լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը										
Գրավառուի կամ վերջինիս լիազորված ներկայացուցչի ստորագրությունը		Ստորագրության տեղը				Կ.Տ. (իրավաբանական անձանց համար)				
Արգելադրման դադարեցման հիմքերը										
<input type="checkbox"/> գրավառուի կողմից լրացված արգելադրման դադարեցման հանձնարարագիր (լրացրեք գրավի դեպքում) <input type="checkbox"/> արգելադրման ժամկետը (նշել արգելադրման դադարեցման ամսաթիվը) կամ այն փաստը կամ իրադարձությունը, որը տեղի ունենալու դեպքում արգելադրումը դադարեցվում է: <input type="checkbox"/> Այլ (նշել)										
<div style="border: 1px solid black; width: 200px; height: 20px; margin-left: auto;"></div>										

Սույն հանձնարարագիրը ստորագրված է՝ <input type="checkbox"/> Գրանցված սեփականատիրոջ կողմից <input type="checkbox"/> Գրանցված սեփականատիրոջ լիազորված ներկայացուցչի կողմից	Ստորագրության տեղը	Կ.Տ. (իրավաբանական անձանց համար)
---	--------------------	----------------------------------

Արգելադրման հանձնարարագիրը ստորագրողի

Ազգանուն, անուն (անվանումը)				
Անձը հաստատող փաստաթուղթ/գրանցման վկայական		Սերիա (առկայության դեպքում)		Համար
Ո՞ւմ կողմից է տրված/ գրանցող մարմնի անվանումը			Տրման/գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Սույն հանձնարարագիրը ստորագրած պաշտոնատար անձի ազգանունը և անունը (իրավաբանական անձանց համար)				

Ստորագրությունը վավերացված է (լրացնել այն դեպքում, երբ հանձնարարագիրը ստորագրվել է ֆիզիկական անձի կողմից՝ Դեպոզիտարիայի ներկայացուցչի բացակայությամբ)

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի կողմից նոտարի կողմից

Անվանում	Կ. Տ.
Ազգանուն, անուն	
Պաշտոն	
Ստորագրություն	
Ամսաթիվը (օր/ամիս/տարի)	

Դեպոզիտարիայի նշումները	Մուտքի N _____ Ամսաթիվը _____ Ստորագրություն _____	<input type="checkbox"/> Մերժված է
	Փաթեթի N _____ Ամսաթիվը _____ Ստորագրություն _____	
	ԳԳՏ N _____ Ամսաթիվը _____ Ստորագրություն _____	
	Այլ նշումներ _____	
Կցվում է _____ էջ		

Հավելված 3.

Բաժնետոմսերի քվեարկության իրավունքի սահմանափակման հանձնարարագիր								ԲՔԻՍ 303.2	
հանձնարարագիրը տվող անձի	Անձնական հաշվի համարը								
Ազգանուն, անուն (անվանում)									
Անձը հաստատող փաստաթուղթ /պետական գրանցման վկայական		Սերիա (առկայության դեպքում)		Համար					
Արժեթղթերի մասին									
Թողարկողի անվանումը									
Գրավադրված բաժնետոմսերի	Դասը								
	Տարբերակիչ ծածկագիրը (ISIN) (առկայության դեպքում)								
Հավաստագրեր (չկան (կան (ԿԳԵՔ և ՆՁԵՔ վավերապայմանները))	սերիա		համար		քանակ				
	սերիա		համար		քանակ				
Հանձնարարագիրը ստորագրված է.	Ստորագրության տեղը						Կ.Տ. (իրավաբանական անձանց համար)		
<input type="checkbox"/> Գրանցված սեփականատիրոջ կողմից <input type="checkbox"/> Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի կողմից									
Ստորագրությունը վավերացված է (յրացնել այն դեպքում, երբ հանձնարարագիրը ստորագրվել է ֆիզիկական անձի կողմից՝ Դեպոզիտարիայի ներկայացուցչի բացակայությամբ)									
<input type="checkbox"/> արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի կողմից					<input type="checkbox"/> նոտարի կողմից				
Անվանում (իրավաբանական անձանց դեպքում)							Կ. Տ. (իրավաբանական անձանց դեպքում)		
Ազգանուն, անուն									
Պաշտոն									
Ստորագրություն									
Ամսաթիվը (օր/ամիս/տարի)									
Դեպոզիտարիայի նշումները	Մուտքի N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____	<input type="checkbox"/> Մերժված է _____ _____ _____					
	Փաթեթի N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____						
	ԳԳՏ N _____	Ամսաթիվը _____	Ստորագրություն _____						
	Այլ նշումներ _____								
Կցվում է _____ էջ									